


„Ա Ր Փ Ի“



ՅՕԲԵԼԵԱՆ...

Արդէն բաւական ժամանակ է, որ մեր գաղափարամարտիկները լուս կոխու են մըրդում հայոց տառերի գիւտի և տպագրութեան յօրեղանի համար և վերջապէս հաշտուելով իրար հետ մի յանձնաժողով են ընտրել, որը պէտք է ծրագրէ տօնի օրուայ հանդէսը:

Այս յօրեղանը իրաւ որ մի մեծ տօն է հայի համար, բայց երբ դա դառնում է սեփականութիւն խմբակցութիւնների, երբ մարդիկ ձեր մէջքին են շալակում իրենց կապրիզները իրաւ որ դուք վրդովւում էք և ասում, մինչև երբ հայ կեանքը մօնոպօլիտով պիտի ղեկավարուի:

Հարց ենք տալիս ժողովներ կազմակերպողներին ա. Ինչո՞ւ չեն կանչում տպարանատէրերին, որոնք գոնէ այդ օրը պէտք է մասնակցեն հայկական միակ գրական ցուցահանդիսին. բ. Ինչո՞ւ չեն կանչում այն մարդկանց, որոնք այսպէս թէ այնպէս մամուլի որ և է օրգանի գլուխ են, գ. մինչև երբ պէտք է մեր կեանքը ընթանայ միակողմանի և լինի սեփականութիւն խմբերի, չէ՞ որ դա մեզ զատում—անջատում է և հեռացնում միմեանցից:


Մենք գոնէ իրաւունք ունինք այս ասելու, որովհետև եթէ մի օր իրօք Թիֆլիսում հայ գրական-տպագրական ցուցահանդէս կազմակերպուի, աւելի քան հաւատում ենք, որ ոչ մի հիմնարկութիւն չի կարող ցուցադրել այնպիսի հազուադիւր հին տըպագրութիւններ, որպիսին ունի թերթիս խմբագիրը և որը ցանկալի կը լինէր ցոյց տալ հայ հասարակութեան, բայց... մենք ստիպուած պիտի լինենք առանձնացած մնալ, որովհետև հետու Գերմանիան մեզ հրաւիրում է մասնակցել գրական ցուցահանդիսին, իսկ մեր քթի տակ եղած հպարտ

ու մեծամիտ հայ ժողովաթխողները ոչ:

Յաւը սովորական է և մենք չենք դարմանում, որ հայ կեանքը ստեղծել է այնպիսի տիպեր, որոնք եսացաւով և մեքէացաւով են բռնուած:

«Մենք մեզ համար, դուք ձեզ համար», անա մի դաւանանք, որին հետևում է ամեն մի հայ մարդ շնորհիւ իր անկուլտուրականութեան:

Բարով մաշէք:



Գերունի.

Ֆրանսացի նկարիչ է. Լիւմինէի.

